

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ  
СЕКТОР ИСТОРИИ АРМ. МЕДИЦИНЫ И БИОЛ. АН АРМ. ССР  
Աշխատություններ № 2, 1949 Труды

Վ. Մ. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻ  
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1941 թ. հունիսի 22-ին մինչև ատամները զինված հիտլերյան Գերմանիան, խախտելով գոյություն ունեցող Հարձակվելու պակտը, ուստադրութ հարձակվեց ՍՍՌՄ-ի վրա: Գերմանիայի բոլոր հրմնական ուժերը նետվեցին մեր ռազմաճակատը, որ ձգվում էր Հյուսիսային և Բալթիկ ծովերից մինչև Սև ծովը: Ամբողջ աշխարհը՝ շունչը պահած, հետևում էր այն հսկայական գոտեմարտին, որ մղվում էր աշխարհի խավարամուների, ի դեմս ֆաշիստական Գերմանիայի ու նրա համախոների և սովետական երկրի միջև, ի դեմս Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի պտուղները ճաշակած սովետական բազմազգ ժողովուրդների:

Իր պատմական ուսումնական պատմությունում (1941 թ. հունիսի 3) ընկեր Ստալինը ասաց.

«Մենք պետք է անհապաղ մեր ամբողջ աշխատանքը վերակառուցնենք ռազմական ձևով, ամեն ինչ ենթարկելով ռազմաճակատի շահերին և թշնամու շախչախումը կազմակերպելու խնդիրներին»:

«Մենք պետք է կազմակերպենք բազմակողմանի օգնություն Կարմիր Բանակին, ապահովենք նրա շարքերի ուժեղացրած համարումը, ապահովենք մատակարարումը անհրաժեշտ ամեն բանով, կազմակերպենք զորքերը և ռազմական բեռներ փոխադրող տրանսպորտների արագ երթակեկությունը, լայն օգնությունը վիրավորներին: Մենք պետք է ամրապնդենք Կարմիր Բանակի թիկունքը, այդ գործի շահերին ենթարկելով մեր ամբողջ աշխատանքը»:

Հայկական ՍՍՌ Կարմիր խաչի ընկերությունը պատերազմի նախօրյակին ուներ 1927 սկզբնական կազմակերպություն, որոնց մեջ ընդգրկված էր 80744 անդամ:

Ընկերությունը մի իսկական մասսայական կազմակերպություն էր, կազմված հիմնարկ-ձեռնարկություններում, գործարաններում, արդյունաբերական օբյեկտներում, կոլխոզներում, սովորողներում և այլուր աշխատող աշխատավորներից: Ընկերության համար վրա հասավ մի ծանր ու եռուն ժամանակաշրջան՝ երկրի սանիտարական պաշտպանության սրբազն պարտականությունը կատարելու գործում նրա ուսակ պատրաստականության ստուգման ժամանակաշրջանը: Խնչակ սեպտեմբերի սովետական ողջ հասարակայնությունը, այնպես էլ Հայաստանի Կարմիր խաչի ընկերությունը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում ակտիվորեն ներգրավվեց երկրի պաշտպանումակությունը բարձրացնելու և առաջին հերթին մեծ հայրենիքի հերոս պաշտպաններին՝ վիրավոր ու հիվանդ մարտիկներին ուղղմանակատում ու թիկունքում. հնարավոր ամեն օգնություն ցույց տալու գործում, կատարելով պարտիայի ու կառավարության լոգոմքը.— «Ամեն ինչ ուղղակատի, ամեն ինչ հաղթանակի համար»:

Հայաստանի Կարմիր խաչի ակտիվիստները՝ քույրերը, դրուժինիկները, ընկերության անդամները, ինչպես և Սովետական Հայրենիքի մնացած աշխատավորները Հայրենական մեծ պատերազմի օրերին ցույց տվին ժողովրդին ծառայելու, պատերազմի հերոսներին, ուղղմանակատներում ու հոսպիտալներում գտնվող վիրավորներին ու հիվանդներին, հաշմանդամներին ու նրանց ընտանիքներին խնամելու, ֆաշիստական ագրեսորների կողմից ժամանակավորապես օկուպացված մարզերից էվակուացվածներին, որբացած երեխաներին խնամելու անձնվիրության օրինակներու:

Պատերազմի հենց առաջին օրերին ընկերության հարյուրավոր և հազարավոր անդամներ ներկայանում էին Կարմիր խաչի կենտրոնական կոմիտե, խնդրելով միջնորդել ուղղմական կոմիսարների առաջ՝ նրանց Կարմիր Բանակի շարքերն ընդունելու, ուղղմանակատ ուղարկվելու համար, կամ խնդրելով ուսուցանել նրանց անհրաժեշտ գիտելիքներ և ուղարկել այնտեղ, որտեղ կարիք կա վիրավոր ու հիվանդ գինվորներին ու հրամանատարներին օգնություն ցույց տալու:

Այդ շրջանում շափազանց բազմակողմանի էր ընկերության գործունեությունը, ըստ որում աշխատանքի բոլոր ձևերն ունեին որոշակի նպատակասլացություն. բոլոր միջոցներով և ուժերով օգնել Կարմիր Բանակին՝ նրան բժշկա-սանիտարական սպասարկում տալու գործում, կանխել վարակիչ հիվանդությունների համա-

Հարակի զարդացման հնարավորությունը թիկունքում, ցույց տալ ամեն կարգի օգնություն առողջապահության օրգաններին՝ սովետական թիկունքը սանիտարական տեսակետից ամուր պահպանելու ուղղությամբ:

Հիշյալ նպատակին հասնելու համար Ընկերությունը վերակառուցում է իր բոլոր աշխատանքները սանիտարա-պաշտպանական առորյա խնդիրների լուծման ուղղությամբ: Պատերազմի ամրող ժամանակաշրջանում Ընկերության առաջ ծառացած են եղել հետևյալ խնդիրները:—

1. Բժշկա-սանիտարական կադրերի, քույրերի, դրուժինիկների, փեղինֆեկտորների, սանիտարների և սանիտարուհիների հնարավորին չափ մեծ քանակության պատրաստումը ռազմաճակատային բուժ-սանիտարական հիմնարկությունների, թիկունքային հոս-պիտակների և առողջապահության քաղաքացիական օրգանների համար:

2. Բժշկական առաջին օգնություն ցույց տալու ուսուցումը բնակչության լայն խավերին:

3. Աշխատավորության նշանակալից մասի ուսուցումը ըստ ՊՍՊ-ի նորմաների:

4. Օգնություն առողջապահության օրգաններին՝ էվակո-հոս-պիտակների կազմակերպման, սարքավորման և աշխատանքի գործում:

5. Էվակուացված բնակչությանը ամեն կարգի օգնության ցուցաբերում:

6. Օգնություն որբացած և ծնողազուրկ երեխաներին:

7. Հակածողային պաշտպանության բժշկա-սանիտարական ծառայության կադրերի պատրաստում:

8. Սանիտարական-պրոֆիլակտիկ և հակահամաճարակային միջոցառումների կիրառում գործարաններում, ֆաբրիկաներում, հիմնարկություններում, կոլխոզներում, սովխոզներում, բնակելի շինքերում:

9. Բժշկական քույրերի պատրաստում կոլխոզային բժշկական պունկտերի համար (1944 թվից):

Վերոհիշյալ խնդիրների իրավործումը ապահովվեց սովետական ժողովրդի բարձր հայրենասիրության առկայությամբ և մասսայական-կազմակերպչական ու ազիտացիոն-մասսայական աշխատանքների ծավալմամբ:

Կարմիր խաչի կազմակերպությունների մի զգալի քանակու-

թյուն ընդգրկված էր սոցիալիստական մրցության մեջ: Միութենական սոցիալիստական մրցության մեջ էր մտել շրջանային կոմիտեների և սկզբնական կազմակերպությունների գգալի մասը, որը և տարեց տարի ակտիվորեն պարզաբում էր իր ստանձնած պարտականությունները կատարելու համար:

1943 թ. վերջներից Կարմիր խաչի Կենտրոնական կոմիտեն, եռամսյակը մեկ անգամ, հայերեն լեզվով լույս է ընծայում բյուլետեն, որի էջերում հանրագումարի է բերվում սոցիալիստական մրցության ընթացքը տվյալ եռամսյակում ըստ շրջկոմի ստանձնած պարտավորությունների կատարման: Թյուկետենը լուսաբանում է Կարմիր խաչի կազմակերպությունների առաջ դրված հրատապ խնդիրները, արձանագրում ձեռք բերած նվաճումներն ու թերությունները և նշում առանձին դժվարությունների վերացման ուղիները: Թյուկետենի հրատարակումը հնարավորություն տվեց բոլոր շրջանային կոմիտեներին և սկզբնական կազմակերպություններին մշտապես իրազեկ լինել Կարմիր խաչի կազմակերպությունների կյանքին և հաջող ազդակ ծառայեց սան-պաշտպանական աշխատանքներում, սոցմրցության ծավալմանը:

Ագիտացիոն-մասսայական աշխատանք էր տարկում կենտրոնական և շրջանային մամուլի, հատուկ նպատակով լույս տեսնող պատի թերթերի, ուսապուրֆիկական և շրջանային ուղիղությով. կազմակերպում են դասախոսություններ, զեկուցումներ, զրուցներ, սանիտարական անկյուններ, սանիտարական երեկոներ, կինո-ցուցադրումներից առաջ ելույթներ և այլն:

Պատերազմի առաջին իսկ տարում Կարմիր խաչի ընկերությունը ուներ 80.000 անդամ: Տարեց-տարի անդամների թիվն աճեց և պատերազմի վերջին մեծացավ ավելի քան երկու անգամ: Համապատասխանաբար աճեց և սկզբնական կազմակերպությունների թիվը:

Կարմիր խաչի կազմակերպությունների անդամներին Կարմիր Բանակ կանչելու հետևանքով՝ պատերազմի առաջին երկու տարում՝ Ընկերության սկզբնական կազմակերպությունների և անդամների թիվը նվազում է, սակայն հետագա տարիներում, ինչպես ասվեց վերևում, նրանց քանակը աճեց: Այդ աճին զգալի շափով նպաստեց ագիտացիոն-մասսայական աշխատանքը:

Կարմիր խաչի ընկերության Կենտրոնական կոմիտեի և շրջանային կոմիտեների կողմից կենտրոնական և տեղական ուղիղությունով բազմիցս կազմակերպվում են ուղիղ-հաղորդումներ և

Հայկական ՍՍՌ Կարմիր խաչի ընկերության կատարած  
ազիտ.-մասսայական աշխատանքը 1941—1945 թ. ձ.

|   | Աշխատանքի անվանումը                           | 1941 | 1942 | 1943 | 1944 | 1945 | Բնդա-<br>յենը |
|---|---|------|------|------|------|------|---------------|
| 1 | Զեկուցումներ, գրույցներ,<br>դասախոսություններ | 684  | 1079 | 1220 | 544  | 780  | 4307          |
| 2 | Մանիս, անկյան կազմա-<br>կերպում . . .         | 806  | 1002 | 1277 | 72   | 211  | 3368          |
| 3 | Ագիտ. բրիգադների կադ-<br>մակերպում . . .      | 19   | 36   | 51   | 87   | 102  | 295           |
| 4 | Պատի թերթի լույս ըն-<br>ծայում . . .          | 64   | 77   | 90   | 40   | 88   | 359           |

սանիտարա-պաշտպանական զրույցներ; 64 անուն լողումգների և պլակատների հրատարակումը հայերեն և ռուսերեն լեզուներով տարածվում են մի քանի տասնյակ հազար օրինակներով:

Սովորական Հայաստանի աշխատավորության՝ Կարմիր խաչի ընկերության անդամների — կոլխոզնիկների, գործարանների, ֆաբրիկաների, հիմնարկների բանվորների ու բանվորուհիների, մտավոր աշխատողների, տնային տնտեսուհիների հայրենասիրությունն առանձնապես ակնառու կերպով է արտահայտվում ամբողջ պատերազմի ընթացքում նրանց կատարած շեֆական աշխատանքի մեջ՝ մանկատներին, հոսպիտալներին, Հայրենական պատերազմի հաշմանդամների տներին, ճակատայինների ընտանիքներին հասցրած օգնության գծով:

Նրանք առանձին սրտագին վիրաբերմունք ցուցաբերեցին Կարմիր Բանակի վիրավոր ու հիվանդ մարտիկներին ու հրամանատարներին խնամելու գործում: Չխորշելով ոչ մի աշխատանքից, նրանք մաքրում, հավաքում էին պալատները, նվիրաբերում ծառիկներ, ուղեգորգեր, վարագույրներ՝ բարեհարմար պայմաններ ստեղծելով հոսպիտալների պալատներում, խնամում ծանր վիրավորներին ու հիվանդներին, կերակրում նրանց, նամակներ գրում նրանց համար, ակտիվ մասնակցում հիվանդների ու վիրավորների կուլտուրական ժամանցը կազմակերպելու ու անցկացնելու գործին, ինչպես նաև նվիրաբերում հիվանդներին ու վիրավորներին զանազան ընծաներ:

Կարմիր խաշի կազմակերպություններից 54-ը շեֆական աշ-  
խատանք էին կատարում 20 հոսպիտալներում, ստանձնելով 82  
պալատի շեֆությունը: 264 ակտիվիստ կամավոր հանձն էին առել  
վիրավոր մարտիկների ու հրամանատարների մշտական խնամքը և  
իրենց այդ պարտավորությունը կատարում էին բարեխղճորեն:

Կարմիր խաշի կազմակերպությունների նախաձեռնությամբ  
Ընկերության անդամներից հոսպիտալների համար հավաքվում է  
21830 օրինակ քաղաքական ու գեղարվեստական գրականություն,  
Կարմիր խաշի կազմակերպած ինքնագործ խմբակների կողմից  
հոսպիտալներում կազմակերպվում է 510 գրական-գեղարվեստա-  
կան երեկո, անց է կացվում 564 զրույց-դասախոսություն սանի-  
տարա-պաշտպանական թեմաների շուրջ, Կարմիր խաշի ակտի-  
վիստուհիները լվանում են 6462 զույգ սպիտակեղեն, վերանորո-  
գում 6994 զույգ սպիտակեղեն ու հագուստ, կարում 6098 զույգ  
նոր սպիտակեղեն: Կարմիր խաշի ակտիվիստների ուժերով մի շարք  
հոսպիտալների համար շինվում են կենդանի ցանկապատեր,  
մերձհոսպիտալային բակերում տնկվում են ծառեր և կատարվում  
զանազան այլ աշխատանքներ՝ մի շարք հոսպիտալներ բարեկեցիկ  
դարձնելու, ինչպես օրինակ՝ քաղանիքների, խոհանոցների, շոգու-  
կաթսաների, ջրմուղի վերանորոգում, մի շարք դեպքերում՝ բանջա-  
րեղենի, այլ և այլ մթերքների, վառելիքի ձրի տեղափոխման կազ-  
մակերպում և այլն: Նրանք նաև 123229 ռուբլու արժողությամբ  
նվերներ են բաժանում վիրավորներին ու հիվանդներին:

Կարմիր խաշը շրջաններում հանձն է առնում ու կազմակեր-  
պում ճակատային 1922 ընտանիքների շեֆությունը: Նա այդ ըն-  
տանիքներին ամրացնում է սկզբնական կազմակերպություններ ու  
ակտիվիստներ, որոնք և հոգում են նրանց կարիքները, նյութա-  
կան օգնություն ցույց տալիս, ընտանիքի անդամներին մատակա-  
րարում հագուստ, գրականություն, վառելիք, օճառ և այլն, մաս-  
նակցում նրանց անմերձ հողամասերի մշակմանը, վերանորոգում  
բնակարանները: Ճակատայինների երեխանների համար հավաքում են  
դասագրքեր ու գրականություն (2645 օրինակ): Ճակատայինների  
ընտանիքներին տալիս են 216564 ռուբլու դրամական օգնություն,  
ճակատայինների համար ուղամաճակատ են ուղարկում 108220  
ռուբլու արժողությամբ ծանրոցներ:

Այդ նույն ժամանակամիջոցում Կարմիր խաշը հարկ եղած ու-  
ղագրություն է դարձնում մանկատների վրա: Ռեսպովակիկայի քա-  
ղաքներում և շրջանային կենտրոններում տեղավորված էր 23

մանկատում, գործում էր 94 շեֆական կազմակերպություն, որոնք թափանցում էին Հիշյալ մանկատների կյանքի բոլոր հարցերի մեջ, հսկում էին նրանց սանիտարական դրությունը, երեխաներին շըրջապատում խնամքով ու գուրգուրանքով, մանկատներին ցուց տալիս ամեն կարգի օգնություն, Այդ գործի մեջ ներգրավել էին զանազան տնտեսական, բոժական և այլ կազմակերպություններ: Շեֆական կազմակերպությունները մանկատների համար հավաքել են 1465 օրինակ գիրք և ժուռնալ, կազմակերպել են մանկական երեկոներ, զրուցներ, պարենամթերային օգնություն, մանկատներին ամրացրել վարսավիրանոցներ (թվով 13) երեխաներին սպասարկելու համար և այլն:

Բոլոր ենթաշեֆային մանկատներում կազմակերպված էին սանիտարական պոստեր, որոնք բացի բժշկական առաջին օգնությունից՝ սիստեմատիկաբար հետևում էին մանկատների շեֆերի, դիշերօթիկ դպրոցների, նրանց ճաշարանների ու խոհանոցների սանիտարական գրությանը:

Կարմիր խաչի Կենտրոնական կոմիտեն վերցրել էր նաև գերմանական օկուպանտներից ազատագրված Վորոշիլովգրադի մարզի և Գոմել քաղաքի երկաթուղային շրջանի № 16 նոր կազմակերպված մանկատների շեֆությունը: Հիշյալ մանկատներին օգնություն ցուց տալու համար Կարմիր խաչի կազմակերպությունները կազմակերպել են միջոցների հանգանակություն, հավաքվել և նրանց ուղարկվել է 305520 ոռությունը:

Հոսպիտալների, մանկատների, հաշմանդամների տների և էվակուացվածների նկատմամբ շեֆական աշխատանքի մեջ առանձնապես աշքի են ընկել Երևանի, Կիրովականի, Արտաշատի, Ախուրյանի, Նոր-Բայազետի, Ստեփանավանի, Ալավերդու և մի շարք այլ շրջանների շրջանային կոմիտեները: Նրանցից մի քանիսը Վորոշիլովգրադի մարզին ցուցաբերած նյութական օգնության համար արժանացել են ընկեր Ստալինի շնորհակալությանը:

Սանիտարական-պաշտպանական լավագույն աշխատանքի համար Կարմիր խաչի առաջավոր շրջանային կոմիտեների և սկզբնական կազմակերպությունների աշխատողներից մինչև 1945 թ. ՍՍՌՄ Կարմիր խաչի և ԿԿԾՄ Գործադիր Կոմիտեի կողմից պարգևատրվել են՝ «Սանապաշտպանության գերազանցիկ» կրծքանշանով՝ 34 մարդ, Գործկոմի պատվողրով՝ 106 մարդ, Հայկական ՍՍՌ Կարմիր խաչի ԿԿ-ի պատվողրով՝ 50 մարդ և դրամական մրցանակով՝ 39 մարդ:

Պատերազմի տարիններին առանձնակի նշանակություն ձեռք բերեց բժշկական կադրերի պատրաստման գործը։ Պատերազմի հենց սկզբից բժշկական կադրերի հսկայական կարիք զգացվեց։ Անհրաժեշտ էր արագ տեմպերով պատրաստել բժշկական միջին և կրտսեր կադրեր, ինչպես ուղմաճակատի, Կարմիր Բանակի, այնպես էլ թիկոնքի համար՝ առողջապահության հիմնարկները ուղմաճակատ մեկնածների փոխարեն բժշկական նոր կադրերով համարելու նպատակով։

Բժշկական կադրերի պատրաստման բնագավառում հատկապես վառ գծագրվեց առողջապահության օրգանների և Կարմիր խաշի կազմակերպությունների համատեղ աշխատանքը։

Պատերազմի տարիններին, բժշկական կադրերի պատրաստման եռուն պահին, առողջապահության օրգանները Կարմիր խաշին իրեն բազա տրամադրեցին անհրաժեշտ բժշկական ցանց՝ հոսպիտալներ, հիվանդանոցներ (քաղաքային և շրջանային), պոլիկլինիկաներ, դիսպանսերներ, ինչպես և դասառութիշկներ։

Տասնյակ բժիշկներ կամավոր ցանկություն հայտնեցին առանց հատուցման դասավանդել Կարմիր խաշի կազմակերպած քույրական, սանիտարական դրուժինիկների, սանիտարական տեսուչների, սանիտարների դասընթացներում, ինչպես նաև ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի խմբակներում։ Այդ բնագավառում իրենց երկարատև և բարեխիղճ աշխատանքի համար արժանի են հիշատակման թերապևտներ և վիրարույժ բժիշկներ՝ ընկ. ընկ. Ս. Հավհաննիսյանը, Գ. Հարությունյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Մելքոնյանը, Պ. Դալամբարյանը և ուրիշներ։

Մեր Հայրենիքի ծանր օրերին ոեսպուրիկայի հայրենասերները, քաղաքական մոմենտի կարևորության խորին գիտակցությամբ, հարյուրներով հաճախում էին դասընթացներ և, չնայած դասընթացների կարճատեսությանը, յուրացնում ուղմաճանիտարական և բժշկական անհրաժեշտ գիտելիքների Այս վերջին հանգամանքը դյուրանում գր նրանով, որ դասընթացներ հաճախողների և ավարտողների մեծամասնությունն օժտված էր քավականալափ ընդհանուր պատրաստականությամբ։ Նրանցից շատերը ունեին լրիվ միջնակարգ և նույնիսկ բարձրագույն կրթություն։ Նրանց պատրաստման որակը դրված էր անհրաժեշտ բարձրության վրա։ Խազմաճակատում, հոսպիտալներում և թիկոնքի քաղաքացիական այլ հիմնարկություններում իրենց հետագա աշխատանքով այդ կադրերը լիապես արդարացրին իրենց։

Պատերազմի տարիներին Կարմիր խաչի ընկերության կողմից պատրաստվել են մի քանի հազար քույրեր, մի հանգամանք, որ դուռը լուսնը շի ունեցել Հայաստանի Կարմիր խաչի նախընթաց ամբողջ պատմության մեջ:

Բժշկական քույրերի պատրաստման համար կազմակերպված էր 24 դասընթաց, որից երեք՝ հոսպիտալների, իսկ քսանմեկը հիվանդանոցների բազայի վրա: Վերջիններից հինգը քաղաքային հիվանդանոցներ էին, մնացած տասնվեցը՝ շրջանային, որոնք ունեին վիրաբուժական և թերապևտիկ բաժանմունքներ: Շրջաններում տեղափորված քույրական դասընթացների կոնտինգենտը կազմվում էր կամ տվյալ շրջանից, կամ մոտակա շրջաններից: Դասընթացների ուսումնական մասը վարում էին փորձառու դասաւութիշկներ, որով և ապահովվում էր քույրերի պատրաստման անհրաժեշտ որակը: Շրջանավարտների պրակտիկ պարագմոնքներն անց էին կացվում հիվանդանոցներում: Զգալի դժվարությունն էր հանդիսանում հայկական դասընթացների մասնակիցներին հայերեն դասագրքերով ապահովելու խնդիրը: Կարմիր խաչի կազմակերպած քույրական կուրսերն ավարտածների 17 տոկոսն անցան Կարմիր Բանակի շարքերը և աշխատեցին գործող քանակում, 20 տոկոսը՝ Հայաստանի և եղբայրակից ուսուցութիկաների հոսպիտալներում, մնացածները՝ ուսազմա-սանիտարական գնացքներում, Առողջապահության Մինիստրության հիմնարկություններում, նոր կազմակերպված կոլխոզային բուժական պոնկտերում և այլ կազմակերպություններում:

Քույրերի մեծագույն մասը պատրաստվեց պատերազմի առաջին տարում: Հետագա տարիներին նրանց թիվը նվազեց, որովհետև պակսեց նաև զգացվող պահանջը:

Հիմնվելով եղբայրակից ուսուցութիկաների փորձի վրա, պարտիայի և կառավարության որոշմամբ, 1944 թից Կարմիր խաչի ընկերությունը ձեռնարկեց կոլխոզային բուժական քույրեր պատրաստելու գործը:

Դասընթացները ընթանում էին համապատասխան ծրագրով, 4 ամսվա մեջ: Մրագիրը կազմված էր՝ հաշվի առնելով կոլխոզային աշխատանքների յուրահատկությունները: Մեծ մասամբ կազմակերպվում էին միջջրշանային դասընթացներ, որոնց կոնտինգենտը կազմում էին կոլխոզնիկութիւնները, որոնք և դասընթացն ավարտելուց հետո վերադառնում էին հայրենի կոլխոզող աշխատելու իրեն բժշկական քույր: Քույրական կուրսերի կոնտինգենտի հավաքման

այսպիսի եղանակն ուներ իր խելացի հիմքը, քանի որ կուրսերն ավարտած բույրը նույն այդ կոլխոզի կուսակցության էր, հիանալի ժանոթ տվյալ կոլխոզի թե աշխատանքներին և կենցաղին և թե ամբողջ սանիտարական դրությանն ու սանիտարական կարիքներին: Բնական է, որ վերջինս անհամեմատ ավելի դյուրին կարող էր կիրառել բուժական սանիտարա-պրոֆիլակտիկ միջոցառումները, քան թե քաղաքից կամ նույնիսկ ուրիշ կոլխոզից եկածը:

1944 թ. Կարմիր Բանակը կոլխոզային բուժպոմկտերի համար պատրաստել է 150 բուժքուր, 1945 թ.՝ 250: Հայկական ՍՍՌ Ժողկում 1945 թ. № 232 և 766 որոշումների հիման վրա, համապատասխան ՍՍՌ-Մ Առողջության 1945 թ. № 745 հրամանի, Հայաստանի Կարմիր խաչը 1945 թ. երկրորդ եռամբյակից սկսած ձեռնարկեց կոլխոզային բուժպոմկտերի ստեղծմանը: 1945 թ. Վերջին հաշվում էր արդեն դործող 174 կոլխոզային բուժպոմկտ: Այդ պոմկտերը զեկավարում էին քույրական դպրոցներն ավարտած նախկին կոլխոզնիկունիքները:

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպությունների կողմից պատրաստվել են հազարավոր սանիտարական դրուժինիկներ այլևայլ բնագավառներում: Սանիտարական դրուժինիկների աշխատանքը խոր թիկունքում նույնպես խիստ շահեկան էր և պատվավոր:

Հայրենական պատերազմի տարիներին Կարմիր խաչի ընկերության կողմից պատրաստվել են նաև 342 սանիտարական հրահանդիչ և 1028 սանիտար, որոնց մեծամասնությունը մորիլիզացվել և գտնվում էր Գործող բանակի շարքերում:

Առողջապահության օրգանների հետ համատեղ՝ Կարմիր խաչի ընկերությունը ծավալել է մասսայական կադրերի պատրաստման գործը:

Հայրենական պատերազմի տարիներին պատրաստվել է, ըստ ՊՍՊ-ի նորմաների.

1941 թ.՝ 68908 մարդ, 1942 թ.՝ 118411 մարդ, 1943 թ.՝ 84492 մարդ, 1944 թ.՝ 104176 մարդ և 1945 թ. առաջին կիսամյակում՝ 56497 մարդ:

Պատրաստվել է ըստ ԵՊՍՊ-ի նորմաների.

1941 թ.՝ 24334 մարդ, 1942 թ.՝ 28110 մարդ, 1943 թ.՝ 40678 մարդ, 1944 թ.՝ 46714 մարդ և 1945 թ. առաջին կիսամյակում՝ 25393 մարդ:

Պատերազմի ընթացքում ոեսպութիկայի շափառաս բնակչու-

թյան և դպրոցական երիտասարդության կեսից ավելին դարձել էին ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի կրծքանշանակիրներ:

Ընկերությունը կազմակերպել էր 1941 թ.՝ 1606, 1942 թ.՝ 1209, 1943 թ.՝ 1769, 1944 թ.՝ 2476, 1945 թ.՝ 2352 սանիտարական պուտեր:

Հակահամաճարակալին աշխատանքներին, առողջապահության օրգանների համատեղ, Կարմիր խաչի անձնավորումների անդամներից մասնակցել են 5924 մարդ, որոնք շրջադաշտել են բակերը և ստուգել 164090 բնակարան, հայտաբերել ջերմող հիվանդների, աշակցել նրանց հիվանդանոցներում տեղավորելով, երկարատև զննման հնիքարկել հիվանդ ունեցող ընտանիքների մնացած անդամների առողջական դրությունը, սանիտարական մշակման ենթարկել վարակի օջախները և այլն:

Սովետական մարդասիրության զաղափարներով էին տողորդված ուսապութիկայի դպրոցականները: Այդ մասին է վկայում պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում Կարմիր խաչի անդամների և սկզբնական կազմակերպությունների թվի անվայրէջք աճը, ինչպես և նրանց աշխատանքների գգալի ծավալումը դպրոցում:

Կարմիր խաչի դպրոցական կազմակերպություններում խոշոր աշխատանք էր ծավալված երիտասարդ սերնդին ըստ ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի նորմաների պատրաստելու և դպրոցականների կարմիր-խաչական, շեֆական, առողջական և սանիտարական լուսավորական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ:

Պատերազմի վերջին սանիտարական պոստերի քանակը՝ պատերազմի առաջին տարվա համեմատությամբ՝ մեծացել էր երկու անգամ: Դպրոցական սանիտարական պոստերը հետևում էրն դրաբոցների սանիտարական դրությանը, հսկում դպրոցականների սանիտարական և անձնական հիգիենայի կանոնների կատարմանը:

Հայրենական պատերազմի առաջին տարիներին Ընկերությունն ուժեղացնում է ափիտացիոն-մասսայական աշխատանքը դռնորական կադրեր հավաքագրելու ուղղությամբ: Ընկերության ավելի քան 1000 անդամ կամավոր ցուցակագրվում են պահեստային դռնորակի շարքերու Ռեսպուբլիկական արյան փոխներարկման կայանը՝ Կարմիր խաչի կազմակերպությունների օգնությամբ՝ դռնորության համար ընտրում և հաշվառման է առնում ընկերության 754 անդամի: Արյան փոխներարկման ռեսպուբլիկական կայանի առաջին իսկ պահանջով նրանք անհապաղ ներկայանում, և կամավոր, առանց հատուցման պահանջի, տալիս են իրենց արյունը վիրավորներին ու

Հիվանդներին։ Նրանցից շատերը պատերազմի ընթացքում տվել են մի քանի տասնյակ լիտր արյուն՝ վիրավոր մարտիկների ու սպաների և քաղաքացիական բուժական հիմնարկությունների հիվանդների առողջությունը վերականգնելու համար։

Երկրի սանիտարական բարեկարգության ապահովման գործում ոչ փոքր խնդիր էր ընկել նաև Կարմիր խաչի ընկերության պատրաստած մասսայական կադրերի վրա։ Առողջապահության օրգաններն իրենց տրամադրության տակ էին ընդունում պատրաստի սանիտարական ակտիվ և սրա օգնությամբ անց էին կացնում սանիտարա-առողջացման լայն աշխատանք ռեսպուբլիկայի քաղաքներում ու գյուղերում։ Նայած աշխատանքի տեղին ու օբեկտին՝ մասսայական կադրերի աշխատանքը կրում էր տարրեր բնույթ։ Արդյունաբերական ձեռնարկություններում Կարմիր խաչի սանձևավորումներն իրենց հսկողության տակ էին ընդունել ցեխների, հանրակացարանների, ճաշարանների, ջրամատակարարման սանիտարական դրությունը։ Նրանք ցույց էին տալիս բժշկական առաջին օգնություն, ապա աշակցում բժիշկներին սանիտարա-պրոֆիլակտիկ միջոցների կիրառման գործում։ Կոլխոզներում նրանք մեծ ուշադրություն էին դարձնում բնակչության ջրամատակարարման, հասարակական հիմնարկությունների և կոլխոզային ֆերմաների բակերի սանիտարական հսկողությանը, առաջին օգնություն էին ցույց տալիս խեղումների դեպքում և աշակցում բժշկական անձնակազմին համաճարակային հիվանդությունները կանխելու գործում։

Քաղաքներում, բնակելի շենքերում, նրանք հսկում էին բնակարանների և բակերի սանիտարական դրությանը. վարակիչ հիվանդություններով առաջարկություններին հայտաբերելու համար կատարում էին շրջագայություններ բակերում, օգնում բժշկական անձնակազմին առողջապահան միջոցառումներ կիրառելիս և այլն։

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում առողջապահական կադրերի զգալի մասը հիմնականում աշխատում էր ուսումնակատում, ուստի բավականաշափ կրծատվեց նրանց աշխատանքը թիկումքում։ Առաջին օգնություն և ինքնօգնություն ցույց տալու մեջ պատրաստված բնակչության լայն մասսաները, ի դեմս ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի հազարավոր կրծքանշանակիրների, և Կարմիր խաչի ընկերության կողմից պատրաստված կադրերը, ի դեմս Ընկերության անդամների, ակտիվիստների, սանիտարական պոստերի, սանիտարական հասարակական տեսուչների, սանիտարական դրուժինիկների, կոլխոզային և այլ բժշկական քույրերի, — շափազանց

օգտավետ դեր խաղացին, ինչպես թիկունքի սանիտարական բարեկարգությունն ապահովելու, այնպես էլ ուսումական և քաղաքական բժշկական հիվանդություններին աջակցելու գործում։ Վիրավորների ու հիվանդների բժշկա-սանիտարական սպասարկման, Հայրենական պատերազմի հաշմանդամներին, ռեսպուբլիկայի սահմանները էվակուացված բնակչությանը, որը երեխաններին օգնություն կազմակերպելու մեջ նրանց կատարած դերը իսկապես նշանակալից է նույնը։

В. М. АВАКЯН

## ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЯНСКОЙ ССР В ПЕРИОД ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Автор описывает весьма полезную многогранную работу общества Красного креста Армении в период Отечественной войны.

Общество, перестроив свою работу в направлении разрешения насущных санитарно-оборонных задач, активно включилось в дело повышения обороноспособности страны и, в первую очередь, в дело оказания всевозможной помощи защитникам Великой Родины—раненым и больным на фронте и в тылу—на всем протяжении войны.

Активистки, сестры, дружинницы, члены общества Красного креста Армении, как и остальные трудящиеся Советской Родины, в период войны показали образцы беззаветного служения интересам народа, заботы о героях войны, о раненых и больных, находящихся на фронтах и на излечении в госпиталях, об инвалидах и их семьях, об эвакуированных из временно оккупированных фашистскими агрессорами областей, о детях погибших воинов.

За время войны общество Красного креста подготовило большое количество медико-санитарных кадров—сестер, дружинниц, дезинфекторов, санитаров и санитарок, которые работали во фронтовых медико-санитарных учреждениях, тыловых госпиталях и в учреждениях гражданских органов здравоохранения.

Автор приводит конкретные данные о работе санитарных формирований по разгрузке военно-санитарных поездов, по уходу за ранеными и больными в госпиталях, по проводимым противоэпидемическим мероприятиям.

В деле обеспечения санитарного благополучия республики выпала немалая задача на подготовленные массовые кадры членов общества Красного креста. Органы здравоохранения получили в свое распоряжение готовый санитарный актив и с их помощью проводили широкую санитарно-оздоровительную работу в городах и селах республики. Работа подготовленных массовых кадров носила разнообразный характер, в зависимости от места и объекта работы. На промышленных предприятиях санитарные оформления Красного креста следили за санитарным состоянием цехов, общежитий, столовых, за водоснабжением, оказывали первую доврачебную медицинскую помощь, помогали врачам в проведении санитарно-профилактических мероприятий. В колхозах они уделяли большое внимание водоснабжению населения,енному содержанию общественных учреждений и дворов колхозных ферм, оказывали первую помощь при травмах, проводили санитарно-просветительную работу и помогали медицинскому персоналу в проведении мероприятий по предупреждению эпидемических заболеваний. В городах и в жилых домах они наблюдали за санитарным состоянием квартир и дворов, проводили подворные обходы для выявления заболевших инфекционными болезнями, помогали медицинскому персоналу в проведении оздоровительных мероприятий и т. д.

По данным автора, патриотизм трудящихся Армении, членов общества Красного креста — работников и работниц заводов, фабрик, учреждений, колхозников, людей умственного труда, членов семей и домохозяек особенно наглядно выразился в проводимой ими в течение всей войны шефской работе над детскими домами, госпиталями, домами инвалидов Отечественной войны и семьями фронтовиков.